ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՎԻՔԻՄԵԴԻԱ ՀԱՅԱՍՏԱՆ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԿ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի և «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպության միջև

ք. Երևան 6.04.2021 թ.

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը (այսուհետ՝ Համալսարան) և Վիքիմեդիա Հայաստան գիտակրթական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Վիքիմեդիա Հայաստան)՝ որպես կրթության բնագավառում նորարարական գործիքների ներդրմամբ և կրթական ծրագրերի իրականացմամբ զբաղվող կազմակերպություն (այսուհետև՝ Կողմերը)

կարևորելով Հայաստանի Հանրապետությունում կրթության ոլորտում 21-րդ դարի հմտությունների ներդրումն ու տարածումը,

խթանելով դասախոսների և ուսանողների շրջանում ազատ և արդի գիտելիքի և դրա ստեղծման հանդեպ հետաքրքրության բարձրացումը,

գիտակցելով, որ համագործակցությունը հնարավորություն կընձեռնի կրթության ոլորտում ներմուծել ժամանակակից մոտեցումներ և կհարստացնի վիքի հարթակներում որակյալ բովանդակության ստեղծումն ու տարածումը,

նպատակ ունենալով ուսանողներին հնարավորություն տալ տեսական գիտելիքներին զուգահեռ ձեռք բերել նաև գործնական հմտություններ,

համաձայնության եկան հետևյալի վերաբերյալ.

1. **Կողմերը պարտավորվում են.**

1.1. համագործակցել Հայաստանում Վիքիմեդիա նախագծերում բովանդակության ստեղծման և զարգացման գործում,

1.2. ապահովել Վիքիմեդիա բովանդակությունից օգտվելու և Վիքի գործիքները կրթական գործընթացում

ներդնելու գործում:

2. Համալսարանի պարտավորությունն է.

2.1. Աջակցել հայերենով որակյալ բովանդակության ստեղծմանն ու ազատ գիտելիքի տարածմանը համացանցում:

2.2 Խրախուսել վիքինախագծերի ներդրումն ուսումնական պրոցեսում և դասախոսների ու ուսանողների ակտիվ մասնակցությունը Վիքիմեդիա Հայաստանի կողմից իրականացվող ծրագրերին:

2.3 Ուսումնական գործընթացի ազդեցության գնահատման մեջ օգտագործել վիքիմեդիա նախագծերում ուսանողների արձանագրած արդյունքների վերաբերյալ Վիքիմեդիա Հայաստանի վիճակագրական տվյալները:

2.4 Վիքիպեդիան ու մյուս նախագծերը ուսումնական գործընթացում կիրառելը ներառել դասախոսների գնահատման կարգի մեջ:

2.5 Ուսանողների ուսումնական պրակտիկան կազմակերպել նաև Վիքիմեդիա Հայաստան կազմակերպությունում:

2.6 Տարածել Վիքիմեդիա Հայաստանի կողմից իրականացվող միջոցառումների մասին տեղեկատվություն Համալսարանի ուսանողների և շրջանավարտների շրջանում:

2.7 Վիքիմեդիա Հայաստանի ներկայացուցիչներին հրավիրել մասնակցելու Համալսարանի կողմից իրականացվող այն նախաձեռնություններին, որոնք կօգնեն տարածել ազատ գիտելիքի գաղափարն ու Վիքիմեդիա նախագծերում խմբագրելու սկզբունքները:

3. Վիքիմեդիա Հայաստանի պարտավորությունն է.

3.1. Պարբերաբար և ըստ անհրաժեշտության կազմակերպել դասախոսների վերապատրաստում Վիքիմեդիա նախագծերը ուսումնական գործընթացում կիրառելու վերաբերյալ և հընթացս տրամադրել խորհրդատվություն:

3.2 Աջակցել դասավանդման գործընթացում Վիքիմեդիա նախագծերի և գործիքների օգնությամբ ուսումնական առաջադրանքների մշակմանը:

3.3 Պարբերաբար կազմակերպել ուսանողների՝ վիքիխմբագրման գործիքների վերապատրաստում և, ըստ անհրաժեշտության, տրամադրել մասնագիտական աջակցություն:

3.4 Համալսարանի դասախոսների հետ համատեղ կազմել մասնագիտական տարբեր ոլորտներից խմբագրման ենթակա հոդվածների ցանկը:

3.5 Համալսարանի կողմից իրականացվող Մասնագիտական կողմնորոշման դասընթացներում ներառել Վիքիմեդիա շարժման և վիքիխմբագրման մասին բաղադրիչ և աջակցել դրա ներկայացմանը աշակերտների հետ հանդիպումների ժամանակ:

3.6 Համալսարանի ուսանողներին ընձեռել Վիքիմեդիա Հայաստանում վերապատրաստվելու և ուսումնական պրակտիկա անցնելու հնարավորություն:

3.6 Համալսարանին տրամադրել Վիքիմեդիա նախագծերում ուսանողների կատարած աշխատանքների ծավալի վերաբերյալ վիճակագրական մանրամասն տվյալներ:

4. Այլ պարտավորություններ.

4.1. Կողմերը հանդիսանում են անկախ, իրենց գործունեությունն ինքնուրույն կազմակերպող կառույցներ, և սույն Հուշագիրը չի կարող սահմանափակել այդ ինքնուրույնությունը:

4.2. Կողմերը համաձայն են իրականացնել նաև այլ փոխաջակցություն ու համագործակցություն, որոնք բխում են սույն Հուշագրում հռչակված սկզբունքներից և չեն հակասում ՀՀ օրենսդրությանը, Կողմերի ներքին կանոնակարգերին ու որոշումներին:

5. Փոփոխություններն ու լրացումները.

5.1. Սույն Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են իրականացվել ցանկացած Կողմի նախաձեռնությամբ և երկրորդ Կողմի համաձայնությամբ:

6. Հուշագրի գործողության ժամկետը և փոփոխությունները.

6.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

6.2. Հուշագիրը կարող է լուծարվել ցանկացած պահի Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով մյուս Կողմին՝ Հուշագիրը լուծարելուց առնվազն մեկ ամիս առաջ:

Հուշագիրը ստորագրող կողմեր

Երևանի պետական համալսարանի	**Վիքիմեդիա Հայաստան գիտակրթական**
Իջևանի մասնաճյուղ	**հասարակական կազմակերպություն**
ՀՀ, ք. Իջևան, 4001, Ուսանողական 1	ՀՀ, ք. Երևան, 0023, Արշակունյաց 4
Տնօրեն	Նախագահ
Անուշավան Մակարյան	**Սուսաննա Մկրտչյան**
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.